ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ-ՏՄԴՀ-ԲՄԱՇՁԲ-23/02

ք. Դիլիջան «04» մայիսի 2023թ.

Դիլիջանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ջեմմա Թադևոսյան» ԱՁ-ն, ի դեմս տնօրեն Ջ. Թադևոսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքում և բնակավայրերում քսանչորս կանգառների կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ մինչև 31.08.2023թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով :

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով , ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանև այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:[28.1]

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **46964112** (քառասունվեց միլիոն ինը հարյուր վաթսունչորս հազար մեկ հարյուր տասներկու) ՀՀ դրամ, որից **7827352** (յոթ միլիոն ութ հարյուր քսանյոթ հազար երեք հարյուր հիսուներկու) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում[30.1]:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված

պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները[31.1].

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1	Շինարարական հրապարակից և/կամ տեղամասից հեռացված չեն աղբը, կենցաղային թափոնները և օտար առարկաները (աշխատանքների իրականացման ժամանակահատվածում, ինչպես նաև մինչև շինարարական օբյեկտը սահմանված կարգով շահագործման հանձնելը)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով
2	Վտանգավոր տեղամասը ցանկապատված չէ, շինարարական տեղամասում պահպանված չեն ժամանակավոր երթևեկության կազմակերպման պահանջները (տեղադրված չեն նախազգուշացնող նշաններ, աշխատանքային տեղամասերը կահավորված չեն լուսաազդանշանային առկայծող լապտերներով և այլն)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,7 տոկոսի չափով
3	Տեղամասերում շինարարական աղբը կուտակված է, թափոնները չեն տեղափոխվել հատուկ հատկացված վայրեր	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով
4	Շինարարությունում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմը չեն կրում հատուկ արտահագուստ և տեխնոլոգիական գործընթացներին համապատասխան պաշտպանիչ հանդերձանք (ձեռնոցներ, սաղավարտներ, ակնոցներ և այլն)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով
5	Շինարարական նյութերը և թափոնները չեն տեղափոխվում ծածկված բեռնատարներով	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,6 տոկոսի չափով

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված

համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Դիլիջանի համայնքապետարան	«Ջեմմա Թադևոսյան» ԱՁ
Ք. Դիլիջան, Մյասնիկյան 55	Ք. Երևան, Օհանով 13-9
ՀՎՀՀ 07618909	ՀՎՀՀ 27925128
ՀՀ 900402057013	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	Հ/Հ 1150009138288246
Համայնքի ղեկավար Դ. Մարգսյան	Տնօրեն Ջ.Թադևոսյան
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
« 04 » մայիսի 2023 թ. կնքված
ՀՀ-ՏՄԴՀ-ԲՄԱՇՁԲ-23/02 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

«ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ և ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՔՍԱՆՉՈՐՍ ԿԱՆԳԱՌՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հ/հ	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չ/մ	Քանակը	Գինը	Գումարը
1	2	3	4	5.00	6.00
	I. Կանգառի կառուցում (1 կանգառ)				
1	Գոյություն ունեցող ասֆալտբետոնե ծածկույթի քանդում	մ³	0.6	5,000.00	3,000.00
2	Ենթաշերտի քանդում	մ³	1.8	700.00	1,260.00
3	Ասֆալտբետոնե ծածկույթի աղոցում	մ	12.6	2,300.00	28,980.00
4	Շինաղրի բարձում մեխանիզմով ա/ինքնաթափի վրա	տ	4.8	1,500.00	7,200.00
5	Տեղափոխում 3կմ լցակույտ	տ	4.8	1,500.00	7,200.00
6	IV կարգի բնահողի փորում հիմքի և հատակի շերտերի համար էքսկավատորով (0.5մ³ շ.տ.), բարձելով	մ³	4.0	1,000.00	4,000.00
7	IV կարգի բնահողի վերջնամշակում ձեռքով	մ³	0.8	5,600.00	4,480.00
8	Նույնի հետլիցք ձեռքով հիմքի կողային հատվածներ	մ³	0.8	1,400.00	1,120.00
9	Բարձած գրունտի տեղափոխում 3կմ	տ	7.8	1,500.00	11,700.00
10	Նախաշերտ հիմքի տակ B7.5 դասի բետոնից H=10սմ	մ³	0.8	37,000.00	29,600.00
11	Միաձույլ ե/բ հիմնային հեծան 0.3x0.4(H)մ կտրվածքով B20 դասի բետոնից	մ³	1.6	82,000.00	131,200.00
12	Ամրան AcI դասի (Φ6)	կգ	12.88	500.00	6,440.00
13	Ամրան A500C դասի (Φ8)	կգ	9.48	600.00	5,688.00
14	Ամրան A500C դասի (Φ14)	կգ	50.82	500.00	25,410.00
15	150x150x4մմ պողպատե կարճախողովակ L=700մմ, տեղադրվող հիմքի հեծանում (7 հատ) ($L_{գնդ}$=4,9մ)	տ	0.089	53,000.00	4,717.00
16	150x150x4մմ պողպատե խողովակի արժեքը	մ	4.9	11,500.00	56,350.00
17	Բնահողի տոփանում խճով	մ²	11.6	340.00	3,944.00
18	Հատակ B15 դասի բետոնից H=120մմ	մ³	1.4	45,000.00	63,000.00
19	Ամրանավորում ցանցով (1մ² 0.8կգ)	տ	0.0093	22,043.00	205.00
20	Պողպատե ամրանային եռակցված ցանցի արժեքը Φ4Bpl դասի 200x200մմ բջիջով	մ²	11.6	800.00	9,280.00
21	Հարթակի երեսպատում բազալտե հղկված սալերով δ=40մմ	մ²	11.6	15,200.00	176,320.00
22	Բազալտե եզրաքար 80x200մմ B15 դասի բետոնե հիմքով (1մ՝ 0.04մ³)	մ	14.8	6,300.00	93,240.00
23	Փայտե սյուների տեղադրում 140x140մմ կտրվածքով (18.6մ)	մ³	0.365	240,000.00	87,600.00
24	Փայտե հեծանների տեղադրում 140x140մմ կտրվածքով (15.6մ)	մ³	0.306	240,000.00	73,440.00
25	Փայտե հեծանների տեղադրում 140x140մմ, L=400մմ (12 հատ)	մ³	0.094	240,000.00	22,560.00
26	Փայտե հեծանների դեկորատիվ մշակում	մ²	4.8	800.00	3,840.00
27	Երեսպատում 30x70մմ փայտե չորսուներով	մ²	12.0	6,200.00	74,400.00

28	Փայտե չորսուների եզրերի դեկորատիվ մշակում	մ²	12.0	820.00	9,840.00
29	Բազրիք 100x60մմ փայտե չորսուներից	մ	6.8	4,200.00	28,560.00
30	Տանիքի փայտե կրող կոնստրուկցիաների տեղադրում՝ ծպեղնատոք 140x60մմ (18.6մ), կանգնակ 140x70մմ (7.6մ), գագաթագերան 140x70մմ (4.2մ)	մ³	0.272	235,000.00	63,920.00
31	Կղմինդրե տանիք, ներառյալ տանիքի պատուհանները, կավարամածի տեղադրմամբ 150x40մմ չորսուներից	մ²	18.2	4,500.00	81,900.00
32	Կղմինդրի արժեքը 33x42սմ	մ²	18.2	6,000.00	109,200.00
33	Կղմինդրե գագաթային էլեմենտների արժեքը, ներառյալ տանիքի պատուհանները	մ	5.8	3,500.00	20,300.00
34	Նստարանի պողպատե խողովակներից հիմնակմախքի մոնտաժում	տ	0.0152	65,789.47	1,000.00
35	40x30x3.5մմ պողպատե խողովակի արժեքը	մ	4.6	2,100.00	9,660.00
36	Նստարանի տախտակում 70x60մմ փայտե չորսուներով (24մ)	մ²	0.81	22,700.00	18,387.00
37	Աղբամանի մետաղական կարկասի պատրաստում, ներառյալ ամրացնող տարրերը	տ	0.019	67,000.00	1,273.00
38	40x30x3մմ պողպատե խողովակի արժեքը (6.5մ)	տ	0.019	636,000.00	12,084.00
39	Աղբամանի ընդունման մասի երեսպատում ցինկապատ թիթեղով δ=5.5մմ	մ²	1.2	42,000.00	50,400.00
40	30x60մմ փայտե չորսուների ամրացում, ներառյալ ամրացման էլեմենտները (21մ)	մ²	1.26	6,000.00	7,560.00
41	Բոլոր մետաղական էլեմենտների նախաներկում և երկշերտ ներկում հակակոռոզիոն և էմալե ներկով	մ²	1.6	1,400.00	2,240.00
42	Բոլոր փայտե էլեմենտների մշակում և երկշերտ լաքապատում	մ²	42.0	1,550.00	65,100.00
	Ընդամենը I՝			-	**1,417,598.00**
	II. Կանգառի էլեկտրալուսավորություն (1 կանգառ)			-	
1	Վերահսկիչ թայմերով 109x101x26մմ, 10Ա, 12/24վտ (Beijung Epsolar mod.LS, 1024 60EPL1)	հատ	1	14,500.00	14,500.00
2	Էլեկտրավահանակ մետաղական 300x200x100մմ վերահսկիչի համար	հատ	1	22,000.00	22,000.00
3	Լուսատու լուսադիոդային 20վտ, 12Վ, 350x201x55մմ (mod. GSS-20/12)	հատ	2	45,000.00	90,000.00
4	ՎՎԳ-0.66 3x2.5մմ² կտրվածքով ուժային մալուխ	մ	20.0	800.00	16,000.00
	Ընդամենը II՝			-	**142,500.00**
	Ընդհանուրը 1 կանգառի համար՝			-	**1,560,098.00**
	Ընդհանուրը 23 կանգառի համար՝			-	**35,882,254.00**
	III. Վերանորոգվող կանգառ (1 կանգառ)			-	
1	Բազալտե երեսպատված սալիկների քանդում, ներառյալ ենթաշերտը	մ²	46.0	1,100.00	50,600.00
2	Բետոնե ենթաշերտի քանդում H=120մմ (46մ²)	մ³	6.9	20,800.00	143,520.00
3	Բազալտե երեսպատված սալիկների քանդում աստիճանների վրայից, ներառյալ ենթաշերտը	մ²	1.2	1,000.00	1,200.00
4	Փայտե երեսպատված չորսուների քանդում δ=20մմ պատերի հատվածում	մ²	39.4	150.00	5,910.00
5	Նույնը, δ=20մմ առաստաղի հատվածում	մ²	56.4	310.00	17,484.00
6	Նույնը, δ=20մմ ճակատների հատվածում	մ²	24.4	150.00	3,660.00
7	Տանիքի թիթեղյա ծածկի քանդում, ներառյալ կավարամածը	մ²	55.4	550.00	30,470.00

8	Շինաղբի բարձում մեխանիզմով ա/ինքնաթափի վրա	տ	18.0	1,560.00	28,080.00
9	Նույն ը, ձեռքով	տ	2.0	900.00	1,800.00
10	Տեղափոխում 3կմ լցակույտ	տ	20.0	1,520.00	30,400.00
11	Հատակ B15 դասի բետոնից H=150մմ (46մ^2)	մ^3	6.9	40,000.00	276,000.00
12	Ամրանավորում ցանցով (1մ^2՝ 0.8կգ)	տ	0.037	21,945.94	812.00
13	Պողպատե ամրանային եռակցված ցանցի արժեքը Φ4Bpl դասի 200x200մմ բջիջով	մ^2	46.0	800.00	36,800.00
14	Հարթակի երեսպատում բազալտե հղկված սալերով δ=40մմ	մ^2	46.0	14,000.00	644,000.00
15	Աստիճանների հատվածի երեսպատում բազալտե հղկված սալերով δ=40մմ	մ^2	2.3	18,800.00	43,240.00
16	Առաստաղի երեսպատում 30x70մմ փայտե չորսուներով	մ^2	56.4	5,500.00	310,200.00
17	Նույնը, պատերի, 30x70մմ փայտե չորսուներով	մ^2	39.4	6,000.00	236,400.00
18	Նույնը, սյուների, 30x70մմ փայտե չորսուներով	մ^2	10.8	6,000.00	64,800.00
19	Նույնը, ճակատների, 30x70մմ փայտե չորսուներով	մ^2	24.4	6,000.00	146,400.00
20	Առաստաղի, պատերի, սյուների և ճակատների փայտե չորսուների եզրերի դեկորատիվ մշակում	մ^2	18.0	800.00	14,400.00
21	Տանիքի մետաղական հիմնակմախքի մաքրում, նախաներկում և երկշերտ ներկում հակակոռոզիոն ներկով	մ^2	28.0	2,000.00	56,000.00
22	Կավարամած 50x50մմ փայտե չորսուներից (154մ)	մ^2	55.4	1,900.00	105,260.00
23	Տանիքի նոր ծածկ պրոֆիլավոր ցինկապատ թիթեղից ԿՊ21-0.55մմ	մ^2	55.4	6,500.00	360,100.00
24	Փայտե կավարամածի մշակում հակահրդեհային և հակաանէխիչ նյութով	մ^2	55.4	550.00	30,470.00
25	Բոլոր փայտե էլեմենտների մշակում և երկշերտ լաքապատում	մ^2	190.0	1,550.00	294,500.00
	Ընդամենը III՝			-	**2,932,506.00**
	IV. Վերաեռոզվող կանգառի էլեկտրալուսավորություն (1 կանգառ)			-	
1	Վերահսկիչ թայմերով 109x101x26մմ, 10Ա, 12/24վտ (Beijung Epsolar mod.LS, 1024 60EPL1)	հատ	2	14,600.00	29,200.00
2	Էլեկտրավահանակ մետաղական 300x200x100մմ վերահսկիչի համար	հատ	2	22,000.00	44,000.00
3	Լուսատու լուսադիոդային 20վտ, 12Վ, 350x201x55մմ (mod. GSS-20/12)	հատ	6	34,800.00	208,800.00
4	ՎՎԳ-0.66 3x2.5մմ^2 կտրվածքով ուժային մալուխ	մ	50.0	800.00	40,000.00
	Ընդամենը IV՝				**322,000.00**
	Ընդհանուրը 1 կանգառի համար՝				**3,254,506.00**
	Ընդհանուրը 24 կանգառի համար՝				**39,136,760.00**
	ԱԱՀ (20%)՝				**7,827,352.00**
	Ընդհանուրը՝				**46,964,112.00**
	Այդ թվում շահույթ՝				**4,305,043.60**
	Ընդհանուրը 100 %				**46,964,112.00**

* Կապալառուն աշխատանքները կատարում է Դիլիջան համայնքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դիլիջանի համայնքապետարան
Քաղ. Դիլիջան, Մյասնիկյան 55
ՀՎՀՀ 07618909
ՀՀ 900402057013
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն

Համայնքի ղեկավար Դ. Մարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ջեմմա Թադևոսյան» ԱՁ
Քաղ. Երևան, Օհանով 13-9
ՀՎՀՀ 27925128
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 1150009138288246

Տնօրեն Ջ.Թադևոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 04 » մայիսի 2023 թ. կնքված
ՀՀ-ՏՄԴՀ-ԲՄԱՇՁԲ-23/02 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

«Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքում և բնակավայրերում քսանչորս կանգառների կառուցման աշխատանքներ»

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքում և բնակավայրերում քսանչորս կանգառների կառուցման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	31.08.2023թ.
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դիլիջանի համայնքապետարան
Ք. Դիլիջան, Մյասնիկյան 55
ՀՎՀՀ 07618909
ՀՀ 900402057013
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն

Համայնքի ղեկավար՝ Դ. Սարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ջեմմա Թադևոսյան» ԱՁ
Ք. Երևան, Օհանով 13-9
ՀՎՀՀ 27925128
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1500009138288246

Տնօրեն՝ Ջ. Թադևոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 04 » մայիսի 2023 թ. կնքված
ՀՀ-ՏՄԴՀ-ԲՄԱՇՁԲ-23/02 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45211211	Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքում և բնակավայրերում քսանչորս կանգառների կառուցման աշխատանքներ	0	0	0	0	14089234	28178467	46964112	46964112	46964112	46964112	46964112	46964112	**46964112**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դիլիջանի համայնքապետարան
Քաղ. Դիլիջան, Մյասնիկյան 55
ՀՎՀՀ 07618909
ՀՀ 900402057013
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն

Համայնքի ղեկավար Դ. Սարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ջեմմա Թադևոսյան» ԱՁ
Քաղ. Երևան, Օհանով 13-9
ՀՎՀՀ 27925128
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1500009138288246

Տնօրեն Ջ.Թադևոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն